Արձանագրություն N 2
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20-3 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.12.2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյան , Գ. Մեհրաբյան , Հ. Ռամազյան , Ա. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Հովեսյան

1. Տեղեկություններ « ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20-3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Խաչիկյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 05.12.2019թ. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20-3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է պարզաբանում այն է.

«Հրավերում նշված նոր կոյուղագծերի /հեղեղատարների, խմելու ջրի ներքին ցանցի/ կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման տեխնիկական բնութագրով աշխատանքների կատարման ընթացքում նախատեսված է համագործակցելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտել աբոնենտների քանակը և կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի/ անհրաժեշտ հզորությունը նախագծային փաստաթղթերը մշակելու համար:

Սակայն նշված չէ միացման կետերի տեխնիկական պայմանները «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ստանալու է պատվիրատուն թե նախագծողը:

1.2 գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է հետևյալ պատասանը.

ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/3 Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Նոր կոյուղագծերի /հեղեղատարների, խմելու ջրի ներքին ցանցի/ կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի արդյունքում պարզաբանում ներկայացրած մասնակցին՝ գնահատող հանձնաժողովը հայտնում է հետևյալը .

Միացման կետերի տեխնիկական պայմանների «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ստանալու է Պատվիրատուն: Այսինքն, պայմանագրի կնքելուց հետո պայմանագրի կողմը համագործակցելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտում է աբոնենտների քանակը և կոյուղատարների /հեղեղատարների ,խմելու ջրի ներքին ցանցի /անհրաժեշտ հզորությունը և Պատվիրատուին է ներկայացնում համապատասխան տեղեկանք , որոնք զետեղված կլինի բոլոր այն անհրաժեշտ տեղեկատվությունը , ինչը անհրաժեշտ է Պատվիրատուին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին դիմելու և համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Խաչիկյան

---------- Վ. Առուշանյան

---------- Գ. Մեհրաբյան

Անդամներ՝

---------- Հ. Ռամազյան

---------- Ա. Գևորգյան

Քարտուղար՝ ---------- Թ.Հովեսյան